

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Սույն օրենքը տարածվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա:

Հոդված 2. Անհատ ձեռնարկատերերն ազատվում են մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների (այդ թվում՝ հաշվարկված և չվճարված տույժերի) վճարումից:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Անհատ ձեռնարկատերերի համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-257 օրենքը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ